

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԶԱՐԵՀ ՍՐԲԱԶԱՆ ԱԹՈՌԱԿԱԼԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ

ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Անսահման վշտով կհայտնենք մահը Նորին Սրբություն Զարեհ Ա Կիլիկիո Կաթողիկոսին երկուշաբթի, փետրվար 18-ին, սրտի տագնապի հետևանքով:

ԱՆԹԻԼԻԱՍ
18 փետրվար 1963

ԽՈՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԽՈՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ԱՆԹԻԼԻԱՍ

Մեծ վշտով ստացանք Ձեր հեռագիրը Զարեհ Սրբազան Աթոռակալի մահվան մասին ուղղյալ Էջմիածնի Կաթողիկոսարանիս:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը խոր կսկիծով ընդունեց սույն անսպասելի և դառնաղետ գույժը և աղոթում է Փրկչի Իջման Ս. Սեղանի առաջ Իր սիրեցյալ Եղբոր արդար հոգվույն խաղաղության և Տանն Կիլիկիո Աթոռի անսասանության համար:

Թող Աստված լուսավորյալ պայծառացնի հանգուցյալի հոգին և Ս. Հոգով մխիթարի Ձեր միաբանությունը և համայն ժողովուրդը:

Վարդանանց տոնին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, հոգեհանգիստ Ս. Էջմիածնի Մայր Տաճարում:

Հաճեցեք հեռագրել թաղման օրը:

ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Ատենապետ Գերագույն Հոգևոր Խորհրդի

ԷՋՄԻԱԾԻՆ
19 փետրվարի 1963 թ.

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ Տ. ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Վշտահար սրտով կխնդրենք Ձեզմե, որ Ս. Աթոռիդ կողմե հատուկ պատվիրակություն Մեր անունով ներկա ըլլա Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Սրբազան Աթոռակալ, Մեր ողբացյալ Ձարեհ Եղբոր թաղմանական արարողությանց:

Ս. Էջմիածնեն վերջին ողջույն և օրհնություն ի Տեր հանգուցյալ Մեր Եղբոր հիշատակին:

ՎԱՉԳԵՆ Ա
Կաթողիկոս Ամենայն Հայոց

ԷՋՄԻԱԾԻՆ
22 փետրվարի 1963 թ.

ԽՈՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ԱՆԹԻԼԻԱՍ

Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ, Էջմիածնի Մայր Տաճարում, Վարդանանցին մատուցվեց սուրբ պատարագ և հոգեհանգիստ Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ի Տեր հանգուցյալ Ձարեհ Սրբազան Աթոռակալի հիշատակին: Պատարագեց Հայկազուն արքեպիսկոպոսը: Դամբանական խոսեց Ասողիկ եպիսկոպոսը, ի ներկայության խուռներամ բազմության: Ներկա էին ողբացյալի ազգականները մեծ թվով, որոնք հետ պատարագի ընդունվեցին Վեհարան Նորին Սրբության կողմից:

ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԷՋՄԻԱԾԻՆ
23 փետրվարի 1963 թ.

ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Նորին Սրբություն Ձարեհ Կաթողիկոսի հուղարկավորությունը վաղն է:

ԽՈՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԲԵՑՐՈՒԹ
23 փետրվար 1963

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Խորեն արքեպիսկոպոս Բարոյան միաձայն ընտրվեցավ Տեղապահ:

ՂԵՎՈՆԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Միաբանական ժողովի նախագահ

ԲԵՑՐՈՒԹ
25 փետրվար 1963